ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՅԺԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 99 - 100 (16902) ՇԱԲԱԹ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՅԻԼ ԹԱԼԱԿՎԱՅԵՆ ԸՆՏՐՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Երեկ՝ դեկտեմբերի 11-ին, անկացվեց Վրաստանի նորընտիր 10-րդ գումարման խորհրդարանի անդրանիկ նիստը, որն անցկացվեց ընդդիմության բոյկոտի պայմաններում: Ընդդիմադիր պատգամավորները խորհրդարան չմտան:

Տասներորդ գումարման խորհրդարանի անդրանիկ նիստին ներկա էին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Գիորգի Գախարիան, Կենտրոնական գործադիր իշխանության ներկայացուցիչները, Աջարիայի եւ Աբխազիայի Ինքնավար հանրապետությունների Գերագույն խորհրդի ու կառավարության ղեկավարները, Վրաստանի Սահմանադրական եւ Գերագույն դատարանների նա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՀՈԳՆԵԼ ԵՆՔ ՓՈՂՈՑԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻՑ»

Իր խոսքում երկրի նախագահը, խոսելով գլոբալ համավարակի պայմաններում անցկացված խորհրդարանական ընտրությունների նշանակության մասին, առանձնակի ընդգծեց բազմակուսակցական խորհրդարանի նշանակալի դերը երկրի շինարարության գործում:

- Այսպիսով, այստեղ եւ հիմա սկսվում է նոր Վրաստանի շինարարությունը: Այս պատասխանատվության նշանակալի մասը վերաբերում է այս խորհրդարանին: Շատ եմ ցավում, որ այս խորհրդարանի որոշակի մասը գերադասեց մնալ դուրս, թեպետ պատասխանատվությունը պահանջվում է բոլորից, որ այս իրավիճակում լինենք միասին եւ օգտագործենք բոլոր հնարավորությունները,- հայտարարեց երկրի նախագահը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահմանադրության համաձայն, նոր պատգամավորների իրավասության ճանաչման պահից դադարեցվում են նախորդ գումարման խորհրդարանի գործունեությունը եւ կառավարության լիազորությունները:

Մինչեւ նոր կառավարության ընտրությունը, ներկայիս գործադիրի անդամները, վարչապետի գլխավորությամբ, դառնում են ժամանակավոր պաշտոնակատարներ:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

32 ՏԱՐԻ ԱՆՑ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ, ՍՊԻՏԱԿՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ՀԱՐԳԵՑ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Դեկտեմբերի 7-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 32-րդ տարելիցի կապակցությամբ, այցելեց աղետից տուժած Գյումրի, Սպիտակ եւ Վանաձոր:

Ժամը 11:41-ին Նիկոլ Փաշինյանը Գյումրիում մասնակցեց երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին մատուցվող պատարագին եւ ծաղկեպսակի զետեղմամբ հարգանքի տուրք մատուցեց նրանց հիշատակին:

Այնուհետեւ, վարչապետն ուղեւորվեց Լոռու մարզի Շիրակամուտ (Նալբանդ) գյուղ՝ 1988 թվականի ավերիչ երկրաշարժի էպիկենտրոն: Նիկոլ Փաշինյանը հարգանքի տուրք մատուցեց երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին՝ ծաղկեպսակ դնելով Շիրակամուտի համայնքապետարանի հարակից տարածքում տեղադրված հուշարձան-խաչքարին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԿԱՐԳ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ

Դեկտեմբերի 7-ին, ի հիշատակ 1988 թվականի ավերիչ երկրաշարժի զոհերի, Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց հոգեհանգստի կարգ:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում երկրաշարժի անմեղ զոհերի հոգեհանգստի կարգը մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ, Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում, շատ քիչ հավատացյալների ներկայությամբ, հոգեհանգստի պատարագներ մատուցվեցին Բաթումիի, Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի, Վրաստանի հայաբնակ մյուս բնակավայրերի եկեղեցիներում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋ

Դեկտեմբերի 11-ին, Վրաստանի խորհրդարանի 10-րդ գումարման նիստի բացմանը զուգահեռ, Ռուսթավելու պողոտայում անցկացվեց ընդդիմության բողոքի ցույց:

Այդ օրը Թբիլիսիում, Սովորող երիտասարդների պալատում, հինգ ընդդիմադիր կուսակցություններն ստորագրեցին իրենց ընդհանուր պահանջները բովանդակող երեք փաստաթուղթ:

Առաջին. հայտարարություն հոկտեմբերի 31-ի ընտրությունների արդյունքները չճանաչելու մասին, քանի որ դրանք կեղծվել

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

COVID - 19

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Դեկտեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի եւ առողջապահական ոլորտի փորձագետների հետ հերթական հանդիպմանը քննարկվեցին Վրաստանում առկա համավարային իրավիճակին, կառավարության երկամսյա ծրագրին ու ինտենսիվ թեստավորման ծրագրի կողմից սահմանված սահմանափակումների արդյունավետության, ինչպես նաեւ աշխարհում Covid-19-ի կառավարման ընթացիկ միտումներին առնչվող հարցեր:

Հանդիպմանը փորձագետները հայտնեցին, որ Վրաստանում գործող սահմանափակումներն արդեն ցույց են տվել որոշակի դրական դինամիկա եւ կառավարությունը սկսել է ինտենսիվ թեստավորման ծրագիր: Նաեւ նշվեց, որ, հաշվի առնելով միջազգային պրակտիկան, կարեւոր է համավարակաբանական վերլուծության արդյունքում սահմանափակումներն աստիճանաբար եւ ուշադիր վերացնել, քանի որ շարժունակության արագ աճը մեծ ռիսկ է պարունակում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԱՆՎՃԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ

ՈՐ ԿԼԻՆԻԿԱՆԵՐՈՒՄ ԿԱՐԵԼԻ Է ԱՆՑՆԵԼ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

«Սահմանված երկամսյա սահմանափակումների շրջանակներում ընթանում է բնակչության ինտենսիվ թեստավորում կորոնավիրուսի դեմ» բովանդակությամբ Վրաստանի կառավարությունը հաղորդագրություններ է ուղարկում բնակչությանը այն մասին, որ Covid-19-ի ախտանշանների դեպքում բնակիչները հետայսու կարող են անվճար թեստ հանձնել:

Միաժամանակ, կառավարությունը հրապարակում է բժշկական հաստատությունների ցանկը, որտեղ պետության ֆինանսավորմամբ հնարավոր է անվճար հանձնել հակագենի վրա հիմնված կորոնավիրուսի թեստը:

Բժշկական հաստատությունների ցուցակն ըստ մարզերի կարելի է տեսնել կառավարության stopcov.ge հատուկ կայքում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ՈՒՇԱԴԻՐ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՄՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՉ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ի ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո «Վրացական երազանքի» եւ ընդդիմադիր կուսակցությունների միջեւ պայմանավորվածության ձեռքբերման նպատակով Վրաստանում ԱՄՆ դեսպանությունն ու Եվրամիության պատվիրակությունը հանդես եկան միջնորդությամբ՝ կողմերի միջեւ երկխոսության անցկացման ուղղությամբ: Նրանց նախաձեռնությամբ, անցկացվեց չորս հանդիպում, թեպետ կողմերի միջեւ վերջնական հաճայանություն չկայացավ: Ընդդիմության կողմից խորհրդարանի աշխատանքին բոյկոտ հայտարարելու կապակցությամբ, միջնորդ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները հանդես եկան հայտարարությամբ:

«Վերջին վեց շաբաթվա ընթացքում Վրաստանի քաղաքական առաջնորդները մասնակցում էին ինտենսիվ քաղաքական երկխոսության: Մենք այժմ կոչ ենք անում բոլոր կողմերին՝ ուշադիր դիտարկել համաձայնության ձեռքբերման հնարավորությունները, որոնք հնարավորություն կտան խորհրդարանին կատարել իր լիարժեք ու կենսական դերը Վրաստանի ժողովրդավարությունը ամրապնդելու գործում: Կուսակցությունների խնդրանքով, եւ եթե կա համաձայնության հասնելու իրական քաղաքական կամք, մենք պատրաստ ենք շարունակել աջակցելու այդ ջանքերին»,- ասված է հայտարարության մեջ:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

են: Նույն փաստաթուղթը պարունակում է ընդդիմության հիմնական պահանջները, ներառյալ վերընտրությունների նշանակումը:

Երկրորդ փաստաթուղթը ընտրությունների արդյունքներով խորհրդարանում տեղեր ստացած ընդդիմադիր կուսակցությունների պատգամավորականի մանդատներից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությունն է:

Երրորդ փաստաթուղթը կոչ է՝ ուղղված Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիային՝ «կուսակցական ցուցակները բացահայտելու» խնդրանքով:

Հուշագիրը ստորագրել են «Լելոն հանուն Վրաստանի», «Եվրոպական Վրաստան», «Միացյալ ազգային շարժում», «Վրաստանի լեյբորիստական կուսակցություն» եւ «Ռազմավարություն Աղմաշենեբելի» կուսակցությունները: «Գիրչի», «Ալեկո Էլիսաշվիլիի. Քաղաքացիներ» եւ «Հայրենասերների դաշինք» կուսակցությունների ներկայացուցիչները չեն մասնակցել փաստաթղթերի ստորագրմանը:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԵԹԵ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՍ ՄԱՆԴԱՏԻՑ, ԱՊԱ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔ ՉԿԱ»

«Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն, անդրադառնալով խորհրդարանի նիստը բոյկոտ հայտարարելու մասին ընդդիմության մտադրությանը, հայտարարեց, որ խորհրդարանի գումարումից հետո, իրենք կնախաձեռնեն օրինանախագիծ կուսակցությունների պետական ֆինանսավորման մասին:

Նրա խոսքով, օրենքում կմտցվեն փոփոխություններ, որոնց հիման վրա այն կուսակցությունները, որոնք հրաժարվում են մանդատներից, ֆինանսավորում չեն ստանա:

- Այստեղ իրավական տրամաբանությունը շատ պարզ է: Կուսակցությունները ֆինանսավորում են ստանում կոնկրետ ձայների հիման վրա եւ կոնկրետ գործունեության համար: Ֆինանսավորումն ուղղակի կապված է ընտրությունների արդյունքների հետ:

Եթե կուսակցությունը հրաժարվում է ձայներից, օրինական չի ճանաչում ձայները եւ հրաժարվում է խորհրդարանական աշխատանքից, ապա նման կուսակցությունն իրավական իրավունք չունի ստանալ ֆինանսավորում,- հայտարարել է Կոբախիձեն:

ԵՐԿԱԹՈՒՂԻ

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ 1500 ԿԻԼՈՄԵՏՐԸ՝ 4 ՕՐՈՒՄ, ԻՍԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻՑ ՄԻՆՉԵՎ ՉԻՆԱԿԱՆ ՍԻԱՆ՝ 8 ՕՐՈՒՄ

Դեկտեմբերի 8-ի երեկոյան Կարս-Թբիլիսի-Բաքու (ԿԹԲ) նոր երկաթուղով առաջին բեռնատար գնացքը, որը չորս օր առաջ դուրս էր եկել Ստամբուլից, հասավ Ախալքալաքի,- այս մասին հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան:

Ախալքալաքիի կայարանում փոխեցին այդ գնացքի վագոնների անվազույգերը, քանի որ Վրաստանում, ի տարբերություն եվրոպական չափորոշիչի (1435մմ), դեռեւս Խորհրդային Միության տարիներից, գործում է երկաթուղային աղուրի ավելի լայնացված տարբերակը (1524մմ):

Հետաքրքիր պատկեր է ստացվում՝ Թուրքիայից Վրաստանի տարածք մուտք գործող, Ադրբեջանի, Տրանսկասպյան լաստանավով, ապա Ղազախստանի տարածքով մինչեւ վերջնակետը՝ Չինաստանի Սիան քաղաք 12-օրյա անցման համար, ընդհանուր 8 693 կիլոմետր ճանապարհի առաջին չորս օրերին գնացքը հաղթահարում է Ստամբուլից մինչեւ Ախալքալաքի՝ 1500 կմ, իսկ մնացած 8 օրվա ընթացքում անցնելու է 7 193 կմ:

Մեր ընթերցողը տեղյակ է, որ Վրաստանով անցնող ԿԹԲ երկաթուղին նոր ուղի է, որը փորձնական ռեժիմով գործում է 2017 թվականից:

Ասենք նաեւ, որ 2020 թվականի հունվար-հոկտեմբերին այդ նոր երկաթուղով Չինաստանից Վրաստանի անցումով առաքված բեռնարկղերի քանակը կազմել է 2343 TEU, ինչը 35,1 տոկոսով ավելի է, քան 2019 թվականի նույն ժամանակահատվածում (1734 TEU): Այդ թվում՝ 2020 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում BTK-ով տեղափոխվել է 1260 TEU, ինչը 371,9 տոկոսով ավելին է, քան 2019 թվականի նույն ժամանակահատվածում (267 TEU)

Նաթիա Թուրնավայի հավաստմամբ, ԿԹԲ երկաթգիծը Չինաստանի եւ Եվրոպայի միջեւ ամենակարճ ճանապարհն է, ինչը նվազեցնում է բեռնափոխադրումների ժամկետները եւ մեծացնում Վրաստանի մրցունակությունն այս միջանցքում:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՆԱՏՕ ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 10-ԱՄՅԱ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՌԴ Սեւծովյան նավատորմի ուժերը 30 երկրի, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի ռազմածովային ուժերի հետ կմասնակցեն AMAN-2021 զորավարժություններին, որոնք 2021 թվականի փետրվարին կանցկացվեն Պակիստանի նավահանգիստ Կարաչիի ջրային տարածքում: Զորավարժություններին կմասնակցեն նաեւ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ճապոնիայի, Թուրքիայի, Ֆիլիպինների, Շրի Լանկայի, Ինդոնեզիայի եւ Մալայզիայի ծովային ուժերը:

Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմածովային ուժերի հետ Ռուսաստանի ռազմածովային ուժերի համատեղ զորավարժություններին մասնակցությունը տեղի է ունենալու նախորդ՝ Bold monarch-2011 զորավարժությունների ավարտից 10 տարի անց, որոնք իրականացվել էին Իսպանիայի ափերի մոտ:

ԱՄՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հավանություն տվեց 2021 թվականի պաշտպանական բյուջեին:

740-միլիարդանոց օրինագծի համաձայն, մասնավորապես, պլանավորվում է պատժամիջոցների ընդլայնում «Հյուսիսային հոսք» եւ «Թուրքական հոսք» խողովակաշարերի դեմ, սպառազինությունների հետագա մատակարարում Ուկրաինային, ամերիկացի եւ ռուսաստանցի զինվորականների համագործակցության արգելք, Թուրքիայի դեմ պատժամիջոցներ C-400 զենիթահրթիռային համակարգերի օգտագործման համար եւ Մոսկվայի դեմ ուղղված այլ միջոցառումներ:

ԻՐԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՑ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԿՈՉ

Եվրոպական «եռյակն» Իրանին կոչ է անում հրաժարվել ատոմային ծրագրի ընդլայնման եւ միջուկային օբյեկտներ ՄԱԳԱՏԷ-ի մուտքի սահմանափակման պլաններից: Այս մասին ասված է Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունների պաշտոնական ներկայացուցիչների համատեղ հայտարարության մեջ:

ՄԱԿ ԲԱՆԱՁԵՎ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Դեկտեմբերի 8-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան ընդունեց բանաձեւեր, որոնցից մեկը վերաբերում է Ռուսաստանի եւ Ղրիմի իրավիճակին: Գլխավոր ասամբլեան այն ընդունեց՝ 63 կողմ, 17 դեմ եւ 62 ձեռնպահ ձայներով: ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը հաստատել է Ղրիմի ինքնավար հանրապետության եւ Սեւաստոպոլ քաղաքի, ինչպես նաեւ Սեւ եւ Ազովի ծովերի ռազմականացման մասին բանաձեւը, որի հովանավորներից մեկը Վրաստանն է, եւ կոչ է անում Ռուսաստանին անհապաղ դուրս բերել իր բռնազավթիչ զինված ուժերը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԺՈՐԱ ՍՆԽՉՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է. ԱՄԵՆԱՅՆ ԼԱՎՆ ՈՒ ԲԱՐԻՆ, ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ

«Վրաստան» թերթը շնորհավորում է բանաստեղծ, արձակագիր, լրագրող, հասարակական գործիչ, ՎՀԳ «Վերնատուն» միության հիմնադիր նախագահ, Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների անդամ Գեւորգ (Ժորա) Սնխչյանին հոբելյանի առիթով: Նա դարձավ 70 տարեկան:



Ուրախությամբ ընդգծում ենք, որ այս օրերին եւս, հերթական բանաստեղծությամբ, հերթական ստեղծագործական արարումով ու գործունեությամբ, շարունակում է իր հաստատուն ընթացքը վիրահայ գրականության, մշակույթի տիրույթներում:

Բազմաբեւեռ է եղել Սնխչյանի գործունեությունը. ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, նա աշխատել է Բոգդանովկայի շրջանի (այժմ՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետ) իր ծննդավայր Ջիգրաշեն գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ: Հետո՝ շրջանային կոմերիտական ու կուսակցական մարմիններում, շրջանային թերթի խմբագրությունում: 1992-1995 թվականներին Վրաստանի խորհրդարանի անդամ էր, ապա՝ երկրի նախագահի աշխատակազմի Ազգամիջյան հարաբերությունների ծայառության պետի տեղակալ: Վերջին տարիներին նա Նինոծմինդայի մունիցիպալիտետի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության ու երիտասարդական հարցերով ծառայության պետն էր եւ այժմ էլ «Ռաֆայել Ջավախ» կենտրոնի ղեկավարն է:

Ինչ ոլորտում էլ ծառայելիս լինի Սնխչյանը՝ գրական մամուլ լինի դա, թե մշակութային օջախ, իր գործունեությունն ուղեկցում է ազնիվ մղումներով: Դրա փաստումն են, անշուշտ, արդեն բազում տարիներ իր խմբագրությամբ Վրաստանի ավագ սերնդի ու սկսնակ հայ գրողներին ներկայացնող «Վերնատուն» ու «Զարթոնք» տարեգրքերը:

Իսկ բանաստեղծ Ժորա Սնխչյանը, ով «Կարոտի կռունկ», «Քավարան», «Ընտրանի» ժողովածուներով վերջին տասնամյակներին մեր գրական մայրուղում ինքնատիպ կածան է բացել, իր գրականությամբ օգնում է իր ընթերցողին՝ Սիրո ու Բարու առաջնորդությամբ գտնել քաղաքացիական ազնիվ կենսադիրք, հոգեւոր ու բարոյական բարձր նկարագիր, պատասխանատու լինել իր ժողովրդի եւ, ընդհանրապես, Աշխարհի բախտի համար:

«Ինչքա՜ն ջուր է անցել, ինչքա՜ն բան փոխվել: Մի բան, սակայն, դեռ մնացել է նույնը: Հույսը՝ վաղվա օրվա նկատմամբ՝ աստվածային մանանայից էլ հզոր ճաշակելիքը, որ մարդուն մաքառել է տալիս ու ապրեցնում»,- այս տողերի հեղինակը Գեւորգ Սնխչյանն է:

Մեր խոսքը Ձեր տողով ավարտելով՝ ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն ստեղծագործական նոր նվաճումներ ու հույսի շողերով լի երկար տարիների կյանք:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ 50 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ԾԱՎԱԼՈՎ

Դեկտեմբերի 8-ին Թբիլիսիի սակրեբուլոն հերթական նիստում հաստատեց մայրաքաղաքի 2021 թվականի բյուջեի նախագիծը:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, նախագիծը սակրեբուլոյի հաստատմանը ներկայացվեց նրանից հետո, երբ քաղաքապետարանը կենտրոնական իշխանությունից ստացավ հատուկ փոխանցման չափը: Ընդհանուր առմամբ, այս գումարը կազմում է 225 միլիոն լարի: Հաշվի առնելով դա՝ Թբիլիսիի քաղաքապետարանը քաղաքային խորհրդին ներկայացրեց մեկ միլիարդ 50 միլիոն լարիի ծավալի բյուջեի նախագիծը:

- Մեր կողմից ներկայացված բյուջեի նախագծի չափը կլինի մեկ միլիարդ 50 միլիոն լարի, որին եւս 50 միլիոն լարի կավելանա 2021 թվականի հունվարին: Վերջապես, քաղաքապետարանի բյուջեն 2021 թվականին կկազմի ավելի քան 1 միլիարդ 100 միլիոն լարի, ինչը թույլ կտա տարբեր կարեւոր նախագծեր իրականացնել մայրաքաղաքում,- հայտարարեց Կախա Կալաձեն:

Մայրաքաղաքի քաղաքապետը կարեւորեց առողջապահության ու սոցիալական ծրագրերի մասնաբաժինը բյուջեում:

- Բյուջեի մեկ երրորդը՝ 33 տոկոսը, ուղղվելու է սոցիալական եւ առողջապահական ծրագրերի ֆինանսավորմանը: Սա ավելի քան 350 միլիոն լարի է: Այսքան գումար երբեւէ չի հատկացվել այս ուղղությամբ, եւ իհարկե կարեւոր է, որ այդ ծրագրերը կօգնեն հենց այն ընտանիքներին, այն մարդկանց, ովքեր առավելապես ունեն մեր աջակցության կարիքը: Այս ուղղությամբ բյուջեն, նախորդ տարվա համեմատ, ավելանում է մոտ 21 միլիոն լարիով,- նշեց Կախա Կալաձեն:

Ըստ նրա, նույնքան գումար է ծախսվելու ենթակառուցվածքների զարգացման վրա:

- 350 միլիոն լարի կծախսվի ենթակառուցվածքային նախագծերի վրա: Գիտեք, որ համավարակի պատճառով մենք ուշացումներ ենք ունեցել, այնուամենայնիվ, մենք նշեցինք, որ ավելի ուշ կսկսենք իրականացնել այդ նախագծերը: Մոտ ապագայում մենք ձեզ կտրամադրենք տեղեկատվություն այն մասին, թե ինչ ծրագրեր են իրականացվելու 2021 թվականի բյուջեով: Հուսով եմ, որ մենք շատ բեղմնավոր քննարկում կունենանք քաղաքային խորհրդում եւ սակրեբուլոն կաջակցի այս բյուջեին,- հայտարարեց քաղաքապետը:



ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔՆ ԱՐԴԵՆ ԿԱՁՄԵԼ է 27 704 100 000 ԼԱՐԻ

Վրաստանի կառավարության պարտքը, 2020 թվականի հոկտեմբերի 31-ի տվյալներով, կազմում է 27 704 100 000 լարի, չհաշված ազգային բանկի կողմից վերցված 27 688,3 մլն ու կազմակերպությունների վարկի տեսքով վերցված մնացորդը՝ 15,8 մլն լարին:

Միաժամանակ, արտաքին պարտքի գումարը՝ 21 781 մլն լարին, կառավարության ողջ պարտքի 79 տոկոսն է կազմում:

2021թ.-ի բյուջեի նախագծին կցված փաստաթղթերում նշված է, որ վարկերի մեծ մասը կազմում է երկկողմ կամ բազմակողմանի դոնորներից, գործընկերներից՝ երկրում առաջնահերթ ենթակառուցվածքային նախագծերի ֆինանսավորման նպատակով:

ԴՈԼԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱՐԻՆ ՆՈՐԻՑ ԱՐԺԵԶՐԿՎԵՑ 10,3 ՏՈԿՈՍՈՎ

Վրաստանի խորհրդարանի բյուջետային գրասենյակի կողմից հրապարակված փաստաթղթի համաձայն, 2020 թվականի նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դոլարի նկատմամբ լարին արժեզրկվել է 10,3 տոկոսով: Նշված ժամանակահատվածում լարին արժեզրկվել է նաեւ եվրոյի նկատմամբ՝ 16,1տոկոսով:

Բացի այդ, 2020-ի նոյեմբերին, նախորդ ամսվա համեմատ, լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 2,8, իսկ եվրոյի նկատմամբ՝ 3,2 տոկոսով:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս երկրներին, վերջին մեկ տարվա ընթացքում թուրքական լիրան ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 28,1, ռուսական ռուբլին՝ 14,7, իսկ հայկական դրամը՝ 1,5 տոկոսով:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, 2020 թվականի նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ԱՄՆ դոլարի նկատմամբ մանաթն ամրապնդվել է 2,7 տոկոսով:

Այսօրվա դրությամբ, վրացական տարադրամի կուրսը դոլարի նկատմամբ կազմում է 3,287 լարի:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱԶԵԼ է ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներով, 2020 թվականի երրորդ եռամսյակում Վրաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 302,6 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 23,6 տոկոսով զիջում է 2019 թվականի երրորդ եռամսյակի ճշգրտված եւ 25,2 տոկոսով գերազանցում 2020 թվականի երկրորդ եռամսյակի նախնական տվյալներին:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Վրաստանում ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալով խոշորագույն երկրներն են Միացյալ Թագավորությունը՝ 117,7 միլիոն ԱՄՆ դոլարով, Նիդերլանդները՝ 79,3 միլիոն դոլարով եւ ԱՄՆ-ը՝ 24,2 միլիոն դոլարով:

Ըստ 2020 թ.-ի երրորդ եռամսյակի ուղղակի խոշորագույն ներդրող երկրների տոկոսային կառուցվածքի, Մեծ Բրիտանիան առաջին տեղում է՝ 38,9 տոկոսով, հաջորդում է Նիդերլանդները՝ 26,2 տոկոսով, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները երրորդ տեղում է՝ 8,0 տոկոսով:

Դրա հետ մեկտեղ, երեք խոշոր (ըստ ուղղակի օտարերկրյա ներդրումների) բաժինների մասնաբաժինը 2020 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 66,8 տոկոս: Ամենամեծ օտարերկրյա ուղղակի ներդրումներն իրականացվել են ֆինանսական բաժնում եւ կազմել 128,3 մլն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է ընդհանուր ուղղակի օտարերկրյա ներդրումների 42,4 տոկոսը: Երկրորդ տեղում էներգետիկ ոլորտն է՝ 37,1 միլիոն, իսկ երրորդ տեղում՝ վերամշակվող արդյունաբերությունը՝ 36,6 միլիոն ԱՄՆ դոլար: 2020 թ.-ի երրորդ եռամսյակի անկումը հիմնականում վերագրվում է հյուրանոցների եւ ռեստորանների (28 մլն ԱՄՆ դոլար), տրանսպորտի (21 մլն ԱՄՆ դոլար) եւ անշարժ գույքի (16 մլն ԱՄՆ դոլար) ոլորտներին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ՊԵՏՔ է ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՐՑՈՎ ԴԻՄԵՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հիշեցնում է հարկատու այն ընկերություններին, որոնք մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 1-ը հետաձգել էին եկամտահարկի ու գույքահարկի վճարումը եւ գործում են զբոսաշրջության ոլորտում (նաեւ դրան հավասարեցրած ոլորտներում) ու Վրաստանի կառավարության կողմից ընդունած որոշման համաձայն, ստացել են եւս մեկ հնարավորություն մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը, եկամտահարկի եւ գույքահարկի բաժնում հայտագրված հարկային պարտավորությունների երկարաձգման վերաբերյալ:

Վերոնշյալ արտոնությունից օգտվելու նպատակով, արտադրական սուբյեկտները համապատասխան դիմումի ձեւաչափով պետք է դիմեն եկամուտների ծառայությանը, որպեսզի առանց նրանց զգուշացնելու չիրականացվեն պարտավորությունների կատարումն ապահովող միջոցառումներ, ինչի վերաբերյալ գերատեսչության կողմից արվել են հատուկ հայտարարություն եւ հանրային կոչ ու հարկատուներին առաքվել համապատասխան ծանուցումներ:

Վերոնշյալից արդեն օգտվել է շուրջ 670 հարկատու կազմակերպություն եւ ավտոմատ կերպով մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը նրանց հարկերի վճարումը հետաձգվել է ու նրանց նկատմամբ պարտավորությունների կատարման ապահովման հարցում միջոցառումներ չեն իրականացվել: Իսկ այն ընկերությունների նկատմամբ, ովքեր համապատասխան դիմում չեն ներկայացրել հարկերը չփոխանցելու մասին, ավտոմատ կերպով կիրականացվեն ստիպող միջոցառումներ՝ ինկասո եւ գույքի կալանք:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հաշվի է առնում գլոբալ համավարակի պատճառով ստեղծված իրավիճակը եւ պատրաստակամություն է հայտնում կրկին քննարկել հարկատուների կողմից ներկայացված առաջարկություններն ու ուսումնասիրել պետության առջեւ ունեցած հարկային պարտավորությունների մարման, ընկերությունների բանկային հաշիվների վրա ներկայացված պարտքերի ժամկետների հետաձգման հարցը:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԾԱՔԱՆԱԿ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Վրաստանի ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության դեպարտամենտի եւ ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային վարչության աշխատակիցները, համատեղ օպերատիվ ու քննչական միջոցառումների արդյունքում «Կարծախի» մաքսային անցակետի տարածքում բերման են ենթարկել Թուրքիայի Հանրապետության քաղաքացի 1970 թվականին ծնված Ֆ.Դ.-ին:

«Ձերբակալվածը մեղադրվում է մեծ քանակությամբ թմրանյութերի ու նոր հոգեմետ նյութերի ապօրինի գնման ու պահման, Վրաստան ապօրինի ներմուծման ու միջազգային տարանցման մեջ: Հանցագործությունները ենթադրում են 8-20 տարի կամ ցմահ բանտարկություն:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային վարչության աշխատակիցները ձերբակալվածի բեռնատար մեքենայի հատուկ թաքստոցում հայտնաբերել են 0,5 կիլոգրամ հերոին եւ 99 դեղահաբ նոր հոգեմետ «ՄԴՄԱ» նյութ, որը ոստիկանության կողմից առգրավվել է որպես ապացույց:

Հետաքննության արդյունքում պարզվել է, որ Ֆ.Դ.-ն առգրավված թմրանյութերը Թուրքիայից անօրինական կերպով Վրաստանի տարածքով տեղափոխում էր Ուզբեկստան»,- նշված է ՆԳՆ տեղեկատվության մեջ:

Քննություն է տարվում մեծ քանակությամբ թմրամիջոցներ եւ նոր հոգեմետ նյութեր ապօրինի ձեռք բերելու, պահելու, Վրաստանի տարածքով անօրինական ներմուծում եւ տարանցում կատարելու փաստերով՝ Վրաստանի քրեական օրենսգրքի 260-րդ հոդվածի 2-րդ մասով, 260-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետով:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵՆ ԸՆՏՐՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խագահները, գլխավոր դատախազը, Ազգային բանկի նախագահը, գլխավոր աուդիտորը, արդարադատության Գերագույն խորհրդի քարտուղարը, Թբիլիսիի քաղաքապետը եւ սակրեբուլոյի նախագահը, ժողովրդական պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը, երկրում գործող մյուս կրոնական ուղղությունների գլխավոր հոգեւոր անձինք, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Վրաստանի սահմանադրության եւ խորհրդարանի աշխատակարգի համաձայն, խորհրդարանի անդրանիկ նիստը բացեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՀՈԳՆԵԼ ԵՆՔ ՓՈՂՈՑԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր ելույթում Սալոմե Զուրաբիշվիլին երկրի բոլոր քաղաքական ուժերին կոչ արեց միավորվել եւ հրաժարվել փողոցներից քաղաքական գործընթացների կառավարումից: Նախագահի խոսքով, Վրաստանը հոգնել է երկու քաղաքական բեւեռների մշտական պայքարից:

- 30 տարի բոլոր սերունդները կանգնած էին փողոցներում: Բոլորը, այդ թվում եւ ես, կանգնած էինք խորհրդարանի աստիճաններին: Այսօր երկրին այլ բան է հարկավոր,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին: Նա հույս հայտնեց, որ այս խորհրդարանը կհամալրվի ինչպես պետք է, որ այս խորհրդարանը կդառնա այն բազմակուսակցական խորհրդարանը, որն անհրաժեշտ է երկրին:

- Ցանկանում եմ շնորհավորել 10-րդ գումարման խորհրդարանի բոլոր անդամներին եւ մաղթել ամենայն հաջողություն՝ ի բարօրություն մեր երկրի,- հայտարարեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Անդրադառնալով տարածաշրջանում ստեղծված իրավիճակին՝ Սալոմե Զուրաբիշվիլին նորընտիր խորհրդարանի առաջին նիստի իր բացման խոսքում հանդես եկավ Կովկասում խաղաղության հարթակ ստեղծելու նախաձեռնությամբ: Նրա խոսքով, Կովկասում հաստատված նոր իրավիճակից ելնելով՝ կարեւոր է, որ Վրաստանը վերադարձնի պատմական դերը, որպես Կովկասի շարժիչ ու միավորող ուժ:

- Կարող ենք մտածել Կովկասյան խաղաղության հարթակի գաղափարի մասին, որը կմիավորի կովկասյան երկրներին, արտաքին դերակատարներին եւ միջազգային կազմակերպություններին: Նման հարթակը կնպաստի համատեղ ենթակառուցվածքների, տնտեսական կամ մշակութային նախագծերի ներկայացմանը եւ իրականացմանը: Կուժեղացնի այս տարածաշրջանի ներուժը՝ կատարելու տրանսպորտային, կոմունիկացիոն եւ էներգետիկ հաբի դեր,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին՝ հավելելով, որ Թբիլիսին պետք է վերադարձնի իր տեղը՝ որպես կովկասյան ինքնության եւ կովկասյան հետազոտությունների կենտրոն:

- Եթե մենք դա չիրագործենք, դրա շատ այլ թեկնածուներ արդեն պատրաստ են,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ՆԻՍՏԸ ՎԱՐԵՑ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԼԱՌՈ ԿԱԽԱՁԵՆ

Նախագահի ելույթից հետո, ստեղծված ավանդույթի համաձայն, խորհրդարանի նիստը վարելու համար հրավիրվեց ներկայիս գումարման խորհրդարանի ամենատարեց պատգամավորը: Խորհրդարանի աշխատակազմի համաձայն, անդրանիկ նիստը վարելու էր ազգային շարժման ընտրացուցակի առաջին համարում ներկայացված Բուբա Կիկաբիձեն, թեպետ ընդդիմադիր կուսակցությունների կողմից, խորհրդարանի աշխատանքին հայտարարած բոյկոտի պատճառով, խորհրդարանի նիստը վարեց «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Լառո Կախաձեն:

Խորհրդարանում պատգամավորները ձայների մեծամասնությամբ, ընտրեցին ձայների հաշվարկման հանձնաժողովի 11 անդամների եւ ժամանակավոր մանդատային հանձնաժողովի 17 անդամներին:

ԹԱՄԱՐ ԺՎԱՆԻԱ. «ՉՆԱՅԱԾ ՍԹՐԵՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան անդրանիկ նիստի մասնակիցներին ներկայացրեց խորհրդարանական ընտրությունների արդյունքները եւ խորհրդարանի պատգամավորի իրավասությունների ճանաչման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Խոսելով խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման եւ դրանց անցկացման փուլում ստեղծված իրավիճակի մասին՝ ԿԸՀ նախագահը նշեց, որ ընտրական վարչակազմը գործունեությունն իրականացնում էր առանձնակի լարված քաղաքական միջավայրում:

- Ողջ քարոզարշավի ընթացքում իրականացվում էր ճնշում, անընդմեջ ապակողմնորոշիչ տեղեկատվություն էր տարածվում ընտրական վարչակազմի վարկաբեկման նպատակով: Օգտագործվում էին ինստիտուտի վրա բռնաճնշման անընդունելի մեթոդներ: Հանձնաժողովի անդամներն աշխատում էին սթրեսային պայմաններում, թեպետ ընտրական վարչակազմը օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն, իրականացրեց անհրաժեշտ ընթացակարգերը,- հայտարարեց Թամար Ժվանիան:

Ներկայացնելով ընտրությունների արդյունքները՝ Թամար Ժվանիան հայտարարեց, որ 10-րդ գումարման խորհրդարանում կընդգրկվի քաղաքական 9 կուսակցություն, որոնցից 8-ը ընդդիմադիր կուսակցություն է, 1-ը՝ «Վրացական երազանքը»:

«Վրացական երազանքը» խորհրդարանում կունենա 90 պատգամավոր, մինչդեռ ընդդիմության 60 տեղերը բաշխվելու են հետեւյալ կերպ. «Եվրոպական Վրաստան» հինգ, «Ազգային շարժում-ուժը միասնության մեջ է» 36, «Հայրենասերների դաշինք» չորս, «Լեյբորիստական կուսակցությունը» մեկ, «Քաղաքացիներ - Ալեկո Էլիսաշվիլի» երկու, «Գիորգի Վաշաձե - ռազմավարությունը՝ շինարար» չորս, «Գիրչի» չորս, «Լելո» չորս:

Ըստ ներկայացված տվյալների, 10-րդ գումարման խորհրդարանում դաշինք ստեղծելու հնարավորություն կունենան միայն «Վրացական երազանքը» եւ «Ազգային շարժումը»: Դաշինք ստեղծելու ընթացակարգերը սահմանված են կանոնակարգով, որը հաշվի առնելով, դաշինք ստեղծելու իրավունք կունենան 7 պատգամավոր, սակայն մեկ կուսակցական ցուցակով ընտրված մեկ կուսակցության անդամները հնարավորություն կունենան ստեղծել միայն մեկ դաշինք:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՃԱՆԱՉԵՑ ՆՈՐԸՆՏԻՐ 150 ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակավոր մանդատային հանձնաժողովի եւ ԿԸՀ նախագահի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, անցկացվեց խորհրդարանի անդամների իրավասությունների ճանաչման ընթացակարգը:

Վրաստանի նորընտիր խորհրդարանը՝ 87 ձայնով ճանաչեց 150 պատգամավորի իրավասությունը:

Խորհրդարանում գտնվող միայն «Վրացական երազանքի» 88 պատգամավորները, ԿԸՀ-ի նախագահ Թամար Ժվանիայի կողմից ընթերցված երդման խոսքից հետո, հանրային երդում տվեցին, ինչից հետո խորհրդարանում հնչեց երկրի պետական օրհներգը:

Նորընտիր խորհրդարանի անդամների իրավասությունների ճանաչման պահից, նախորդ գումարման խորհրդարանի իրավասությունները հայտարարվում են դադարեցված:

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆՆ ՈՒ ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻ ԲԱՑՄԱՆԸ

Խորհրդարանի կողմից իրավասու ճանաչված 150 պատգամավորների թվում էին Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական ընտրակարգով խորհրդարանի անդամ **Սամվել Մանուկյանը**, որը նախորդ գումարման խորհրդարանում համամասնական պատգամավոր էր եւ Նինոծմինդայի սակրեբուլոյի նախկին նախագահ, «Վրացական երազանքի» ցուցակով համամասնական պատգամավոր **Սմբատ Կյուրեղյանը**:

Այդ օրը պատգամավոր իրավասությունները ստանձնեցին նաեւ Ախալցիխեի, Ասպինձայի, Բորժոմիի ու Ադիգենիի մեծամասնական պատգամավոր **Անտոն Օբոլաշվիլին**, Ծալկայի, Բոլնիսնի, Թեթրիծղարոյի մեծամասնական պատգամավոր **Գոգի Մեշվիլիանին**, Մառնեուլիի ու Գարդաբանիի պատգամավոր **Զաուր Դարգալին**, Թբիլիսիի Իսանիի եւ Սամգորիի պատգամավորներ **Կախա Կախիշվիլին եւ Սոզար Սուբարին**:

ԸՆՏՐՎԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՎ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Սահմանադրության համաձայն, Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանը իր անդրանիկ նիստում, պատգամավորների իրավասությունների ճանաչումից հետո, ձեռնամուխ եղավ օրենսդիր մարմնի նախագահի, առաջին

փոխնախագահի, փոխնախագահների, ինչպես նաեւ խորհրդարանական կոմիտեների ղեկավարների ընտրությանը:

Քանի որ նորընտիր խորհրդարանում «Վրացական երազանքը» տնօրինում է պատգամավորական մանդատների մեծամասնության, ապա այն առաջադրեց խորհրդարանի ղեկավարությունում հանգուցային պաշտոնների թեկնածուներին: Այսպես, «Վրացական երազանքի» առաջադրմամբ, խորհրդարանի նախագահ ընտրվեց **Արչիլ Թալակվաձեն**: **Գիորգի Վոլսկին** ընտրվեց առաջին փոխնախագահի, իսկ **Կախա Կուճավան եւ Դավիթ Սերգեենկոն** փոխնախագահների պաշտոններում (սահմանադրության համաձայն, ընտրվելու է եւս երկու փոխնախագահ, որոնք ներկայացնելու են խորհրդարանական փոքրամասնությունը): Խորհրդարանական մեծամասնության ղեկավար ընտրվեց **Մամուկա Մդինարաձեն**:

Ինչ վերաբերում է խորհրդարանական կոմիտեներին, ապա «Վրացական երազանքի» առաջադրմամբ, **Անրի Օխանաշվիլին** գլխավորելու է Իրավաբանական հարցերով կոմիտեն, մարդու իրավունքների կոմիտեի նախագահ ընտրվեց **Միխեիլ Սարջվելաձեն**, պաշտպանության կոմիտեի նախագահ՝ **Իրակլի Բերաիան**, ընթացակարգային հարցերի կոմիտեի նախագահ՝ **Իրակլի Քադագիշվիլին**, տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի նախագահ՝ **Սոզար Սուբարին**, ֆինանսաբյուջետային կոմիտեի նախագահ՝ **Իրակլի Կովզանաձեն**, ճյուղային էկոնոմիկայի եւ տնտեսական քաղաքականության կոմիտեի նախագահ՝ **Դավիթ Սոնղուլաշվիլին**, ագրարային հարցերով կոմիտեի նախագահ՝ **Նինո Ծիլոսանին**, շրջակա միջավայրի եւ բնական ռեսուրսների կոմիտեի նախագահ **Մայա Բիթաձեն**:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքական բլոկին, ապա **Նիկոլոզ Սամխարաձեն** կգլխավորի արտաքին հարաբերությունների կոմիտեն, **Մակա Բոճորիշվիլին**՝ եվրոպական ինտեգրման կոմիտեն, իսկ **Բեքա Օդիշարիան**՝ Սփյուռքի եւ Կովկասի հարցերի կոմիտեն:

Սոցիալական բլոկից **Դմիտրի Խունդաձեն** կլինի առողջապահության կոմիտեի նախագահը, **Թեա Ծուլուկիանին** կգախավորի կրթության կոմիտեն, իսկ **Միխեիլ Ղավելաշվիլին** ընտրվեց սպորտի կոմիտեի նախագահ:

ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Առնվազն մինչեւ դեկտեմբերի 17-ը Վրաստանի խորհրդարանը պետք է ընտրի նոր կառավարություն: Ամենայն հավանականությամբ, կառավարությունը կրկին կգլխավորի Գիորգի Գախարիան: Ինչ վերաբերում է առանձին նախարարությունների ղեկավարների թեկնածություններին, ապա այդ հարցով որեւէ որոշում հայտնի չէ:

Կառավարություն ձեւավորելու համար, անհրաժեշտ է նվազագույնը 76 պատգամավորի աջակցությունը: Իշխող թիմը խորհրդարանում ունի 90 մանդատ:

Խորհրդարանի պատգամավորների իրավասությունների հաստատումից հետո, խորհրդարանականները ձեռնամուխ եղան խորհրդարանի նախագահի, նրա առաջին տեղակալի եւ փոխնախագահների, ինչպես նաեւ խորհրդարանական կոմիտեների նախագահների ընտրությանը:

Այդ պահից դադարեցվում է նախկին՝ 9-րդ գումարման խորհրդարանի իրավասությունը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ